




Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

351

(15 x 18)

321

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Պրոֆեսորներ բոլոր երկրների միացիւն.

Բանասիրական, Գիւղացիական և Կարմիր բանակայինների  
պատգամաւորների խորհուրդների ընտրութեան նրկանի  
պատգամային յանձնաժողով:

321

Ն. ՕՍԻՆՍԿԻՅ

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX


ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ



Առաջին կարգի քաղաքացիական ծառայության համար



367-ԱԳԴ

## ՀԱՄԱՁԱՅՆՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՆՆԵՐԸ (создатели) ԵՒ ՄԵԾԱԾԱՍՆԱԿԱՆՆԵՐԸ

Ռուսական յեղափոխութեան սկզբից վեճ է տեղի ունենում կոմմունիստների և այն մարդկանց միջև, որոնց մեծամասնականները «համաձայնողներ» անւանեցին: «Համաձայնողներ» անւանւեցին նրանք, որոնք դիւղացիներին և բանւորներին խորհուրդ էին տալիս չվերցնել իշխանութիւնը իրենց ձեռքը, այլ հարուստների, բուրժուազիայի հետ հաշտ ապրել, և բոլոր գործերը վարել կապիտալիստների, կալւածատէրերի և կուլակների հետ համաձայն և համեմատաբար:

Վիճում էին այն մասին, թէ պետական կազմութեան, որ ձեր տւելի լաւ է, ձեռնտու է բանւորներին և դիւղացիներին: Համաձայնողներն ասում են, որ ամենից լաւը դեմոկրատական հանրապետքիւնն է, մեծամասնականներն ասում են, որ ամենից լաւը խորհրդային հանրապետքիւնն է:

Գերմանիայում էլ, հէնց որ սկսեց յեղափոխութիւնը բարձրացաւ այդ վեճը: Գերմանացի համաձայնողները պաշտանում են դեմոկրատիկ հանրապետութիւնը, Գերմանիայի մեծամասնականները ցանկանում են Գերմանիայում խորհրդային հանրապետութիւն սահմանել:



Ի՞նչով է լաւ դիմոկրատական հանրապետութիւնը: Սկզբնական շրջանում համաձայնողները ասում էին, որ պէտք է նրան մտցնել, որովհետեւ ոռւսական յեղափոխութիւնը — բուրժուական յեղափոխութիւն է: Ռուսական յեղափոխութիւնը չպէտք է և չի կարող տապալել բուրժուազիային, ասում էին նրանք: Կարելի է կալաժառիրոջ ձեռքից հողի մի մասը վերցնել, բայց անպայման վճարով: Իսկ գործարաններն ու արհեստանոցները հարուստ տէրերից խլել չի կարելի: Բանւորները առանց տէրերի չեն կարող գործարանները պահել, կառավարել նրանց: Այդ պատճառով էլ պէտք է մտցնել միայն դեմոկրատական (ժողովրդական) հանրապետութիւն: Դա շատ լաւ հանրապետութիւն է, բայց և այնպէս, այնպիսի է, որտեղ հարուստների համար անկիւն կայ: Դիմոկրատական հանրապետութեան ժամանակ հարուստներն էլ կարող են բանւորների հետ կառավարել պետութիւնը:

Այժմ, երբ Գերմանիայում էլ բանւորները ոտի կանգնեցին, շատ համաձայնողներ (օրինակ մենշևիկները) արդէն էլ չեն ասում, որ հարկաւոր է բուրժուական յեղափոխութիւն անել: Նրանք ասում են, որ այժմ կարելի է դադարել տէրերի հետ բարեկամութիւն անելուց, կարելի է նրանցից հողն ու գործարանները վերցնել, սոցիալիզմ անել: Բայց և այնպէս, նրանք մտածում են, որ դիմոկրատական հանրապետութիւնը — աշխատաւոր ժողովրդի համար ամենաշահեկան պետական ձևն է:

Միայն այժմ նրանք նոր նէյնիմներ են երգում: Նրանք ասում են. «Որպեսզի իսկական սոցիալիզմ իրականացնել և որպէսզի, իշխանութիւնը իրօք տշխատա-



ւոր ժողովրդի ձեռքին լինի, հարկաւոր է հիմնել դեմոկրատական և անբաւարարութիւն»:

Բանից դուրս է գալիս որ համաձայնողները ձմեռամեկ շորով են եօլա գնում: Դեմոկրատական հանրապետութիւնը և այն ժամանակ լու է, երբ հարկաւոր է բուրժուազիային ոչնչացնել: Նոյն իսկ երեխայի համար էլ պարզ է, որ այդ երկու գրութիւնները իրար չեն համապատասխանում և այդտեղ համաձայնողներէ կապը կտրոււմ է:

**ԽՆԶ ԲԱՆ Է «ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ»**

Բայց թնչ բան է այդ դեմոկրատական հանրապետութիւնը: Հանրապետութիւն կոչուում է այն պետութիւնը, որի մէջ (միայն խօսքով) բոլոր գործերը վարում է ամբողջ ժողովուրդը \*):

Որպէսզի վարի ամբողջ պետութեան գործերը, ժողովուրդը ամեն տարի պատգամաւորներ է ընտրում: Այդ պատգամաւորները հաւաքւում են ժողովի, որը կոչւում է պարլամենտ: Պարլամենտը որոշում է բոլոր գործերը, նշանակում է և փոփոխում կառավարութիւնը: Պարլամենտի ընտրութիւններին մասնակցում են բոլորը՝ աղամարդիկ և կանայք: Ընտրութիւնների ժամանակ ոչ մէկը միւսի վերաբերմամբ ոչ մի առանձնաշնորհումով չի օգտուում, հարուստներն ու ուսեալները նոյնպէս, ինչպէս և աղքատներն ու անգրագէտները, հաւասարապէս իւրաքանչիւրը միայն մի ձայնունի: (հաւասար ընտրութիւններ): Անմիջապէս ընտրում են պարլամենտի անդամներ և ոչ թէ մարդկանց:

\*) «Դեմոկրատիա» բառացի կնշանակէ ժողովրդի իշխանութիւն, ժողովրդապետութիւն:

որոնք յետոյ իրենց միջից ընտրելու են վերջիններին: Սյուպիսի ընտրողները միշտ կարող են խաբել իրենց ընտրողներին, սակայն կանցկացնեն այնպիսի մարդկանց որոնց ժողովուրդը չէր ուզենայ ընտրել (սպառազամաւորների ուղղակի ընտրութիւններ): Ընտրողները ձայն են տալիս ոչ թէ ուղղակի, դիւղական հաւաքոյթներում և ժողովներում, այլ առանձին, մէկ կտոր թղթի վրայ գրում են նրանց անունները, որոնց թուղում են ընտրել (գաղտնի քւէարկութիւն): Դա անհրաժեշտ է, որպէսզի աղքատ ընտրողը չվախենայ հարուստ տիրոջից և կարողանայ իր քւէն ընկերոջը տալ և ոչ թէ թշնամուն:

Դեմոկրատական հանրապետութեան մէջ բոլորն էլ հաւասար իրաւունքներ և հաւասար ազատութիւն ունին: Բոլորն էլ կարող են գրել և ասել ժողովներում այն, ինչ որ կամենան: Բոլորն էլ ունեն «մամուլի», խօսքի, ժողովների, միութիւնների և խղճմտանքի ազատութիւն: Բոլորն էլ օգտուում են անձի անձեռնմխելութեան իրաւունքից, դա կնշանակէ, որ ոչ ոքի չի կարելի ձերբակալել և բանտ նստեցնել առանց դատի:

Դեմոկրատական հանրապետութեան մէջ մշտապէս բանակ չկայ, այլ կայ համաժողովրդական պահեստի դօրք: Զինւորներին դօրանոցներում չեն պահում դէնեռախների հսկողութեան տակ: Դա անհրաժեշտ է նրա համար, որպէսզի ոչ ոք չկարողանայ դօրքը դուրս բերել ժողովրդի դէմ: Պահեստի զինւորները (ОПОЛЧЕНЦЫ) չեն համաձայնի կրակել ժողովրդի վրայ, ինչպէս այդ անում են սպանիրով մարդաժ գիւղերները: Բացի զրանից պահեստի դօրքը շատ աւելի քիչ ծախս է պահանջում, քան մատական բանակը: Եւ ժո-



դովուրդը գործաքաններից և դիւզից չի գնայ զօրա-  
նոցները անգործութեան մատնելի:

Ահա թէ ինչ բան է դեմոկրատական հանրապե-  
տութիւնը: Հեռից նա շատ հրաշալի բան է երևում,  
այնքան լաւ, որ դեռ ամեն տեղ չի տարածւել: Նոյն  
խալ արտասահմանում ամենաառաջաւոր երկրներում  
կան տեղեր, ուր պետութիւնը ալդ ձեով չի կազմա-  
կերպւել: Շատ երկրներում, օրինակ, Անգլիայում, Իտա-  
լիայում և այլն դեռ կայսրներ կան, թէպէտ այնտեղի  
գործերը վարում են պարլամենտները և բոլոր քաղա-  
քացիներին ազատութիւն է տւած: Դեռ ոչ ամեն տեղ  
(օրինակ Ֆրանսիայում, Ամերիկայում) կանայք կարող  
են պարլամենտի ընտրութիւններին մասնակցել և այլա-  
դեմոկրատական հանրապետութիւնը կարծես թէ ամե-  
նալերջին ձևի բան է, ամենաառաջնակարգ տեսակի:  
Կարծես թէ այդպիսի հանրապետութեան մէջ ժողո-  
վուրդը պէտք է լաւ ապրի:

#### ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԱՌԸ

Իրօք, եթէ լաւ դիտենք, մօտիկից նայինք այդ-  
պիսի դեմոկրատական հանրապետութեան աստառին,  
կատալի բոլորովին այլ պատկեր:

Ոչ թէ ժողովուրդը այլ կապիտալը, հարստութիւնն  
է, որ վարում է այն երկրների գործերը, որոնք հա-  
մարում են ամենալուսաւոր և դեմոկրատական եր-  
կիրներ:

Ընդհանուր ընտրողական իրաւունքը, մամուլի և  
խօսքի լիակատար ազատութիւնը, ընդհանուր համա-  
ժողովրդական բանակը—այդ բոլորը միայն խօսքեր  
են, եթէ երկրի մեքողջ հարստութիւնը գտնւում է

միջոանի հարուստների ձեռքին: Դործի էութիւնը նրանումն է, թէ ում կապտականն փողը, հողը, գործարաններն ու արհեստանոցները: Բոլոր ազատ համբաւեաութիւնների մէջ (Ամերիկայում, Ֆրանսիայում) գրամի, դրամական կապիտալի վրայ իշխանութիւնը պառկանում է բանկերին: Բանկերը, դա այն հիմնարկութիւններն են, որոնք բոլորին փոխարինաբար դրամ են տալիս և բոլորից տոկոսներով դրամ են ընդունում:

Իւրաքանչիւր երկրում ալժամ կան հինգ վեց ամենախոշոր բանկեր: Այդ բանկերը գտնւում են մի երկու տասնեակ հարուստ ջոջերի՝ միլիոներների ձեռքում: Այդ բանկերը իրենց մօտն են հաւաքում մանր և խոշոր աէրերի դրամը: Ամենքը զնում են նրանց մօտ, որովհետև մեծ բանկը ամենավստահելին է և ամենամեծ տոկոսն է վճարում, բոլորն էլ նրանցից փոխարինաբար վերցնում են, որովհետև խոշոր բանկերը դրա փոխարէն պարտատէրերից ամենացածր տոկոսներն են վերցնում:

Իսկ դրամը հարկաւոր է ամենքին էլ: Նա ամենից առաջ հարկաւոր է գործարանատէրերին: Նրանց շատ դրամ է հարկաւոր, որպէսզի մեքենաներ գնեն, քարածուխ, երկաթ, բոնւորներին վճարեն և այլն: Իսկ բանկից դրամ վերցնելով նրանք դառնում են նրա ստրուկը: Դա դեռ բաւական չէ. բանկերը աւելի ու աւելի գնում են գործարանների փայերը և իրենք դառնում են նրանց տէրը: Ամերիկայի և Ֆրանսիայի համարեա բոլոր գործարանները ամբողջովին, կամ կիսով հափ պառկանում են բանկերին: Նոյնն էր նաև



մեզ մօտ Ռուսաստանում մինչև Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը:

Այսպիսով բանկերի տէրերը իրենց են ենթադրում ամբողջ բուրժուազիային, միացնում են նրան մէկ ընդհանուր միաբան ընտանիքի մէջ:

Բանկերին են ծառայում նաև բոլոր կրթած մարդիկ: Բոլոր նրանք, որոնք ուղեղով են աշխատում, մտաւոր աշխատանք տանում՝ գիտնականը, գրողը, ինժիները, փաստաբանները—բոլորը նրանք կապիտալի ստրուկներն են: Որպէսզի մէկ գիրք ապէ, գիտնականը կամ գրողը պէտք է երկրպագութեան գնոյ ապարանի տիրոջը: Իսկ ապարանի տէրը՝ գրքերի և լրագիրների հրատարակողը, ենթարկւում է բանկին: Նա պարտք ունի բանկին, նա իր ապարանի փայլ ծախել է բանկին: Ինժիները իր ապրուստը ստանում է գործարանատիրոջից, իսկ գործարանատէրը ենթարկւում է բանկին: Փաստաբանը իր ապրուստը հայթայթում է այդ տուգների, ջոշերի գործերը դատարանում պաշտպանելով:

Բացի դրանից, այդ ջոշերը բոլոր միջոցներով ընտելացնում, կապում են իրենց հետ կրթւած մարդկանց: Նրանք ժրջան և լարւած աշխատանքի համար ինժիններներին տալիս են իրենց օգուտների տոկոսներից: Իսկ երբ գրողը, ինժիները, փաստաբանը դրամական մէկ կլորիկ դումար հաւաքելով դնում է այդ նոյն բանկում՝ այդ տուգների արեւակից ընկերն է դառնում:

Բարձր պաշտօնէութիւնը, գեներալները և ազաները նոյնպէս իրենց ապրուստն ստանում են խոշոր հարուստների ձեռքից: Վերջապէս չէ որ նրանք նրանց

հարազատներն են: Չէ որ չինովնիկներն ու գեներալները խոշոր հարուստների որդիներն ու եղբայրներն են: Նրանք միմեանց հետ բարեկամ են և իրար նման:

Եւ բանից դուրս է գալիս, որ գեմոկրատական հանրապետութեան մէջ չինովնիկները, գեներալները, քահանաները, գրողները, ինժինեռները, փաստաբանները, մի խօսքով ըլլոր նրանք, ով իրօք կառավարում է պետութիւնը՝ ըլլորը արիւնով կապւած են կոպիտալի հետ, ենթարկւում են կապիտալին:

Իսկ մանր մարդիկ, քաղաքի մեղչանները և գիւղի կուլակները կամ ենթարկւում են բանկին, կամ քանկի դործավարին—քիչ աւելի փոքր տիրոջը:

Իսկ անգիտակից բանւորների մասսան—բացարձակօրէն ենթարկւում է խոշոր գործարանի տիրոջը: Տէրը միշտ կարող է փակել գործարանը, ցածրացնել աշխատավարձը՝ բանւորներին մուրացկան դարձնել: Նա միշտ էլ կարող է գործադուլը ճնշել. չէ որ նրանք քանկի միջոցով միացած են մէկ ընտանիքի մէջ: Եւ այդ ընտանիքը շատ աւելի ուժեղ է քան բանւորականը:

Սաւաթ, յետամնաց գիւղացիների մասին, որոնք օր ու գիշեր տանջւում են իրենց մի կտոր հողի վրա, խօսելն էլ աւելորդ է: Նրանք դտնւում են գիւղական վաշխառու կուլակների, կալւածատէրերի ճանկերում: Նրանք աւելի թոյլ են, քան բախւորները, որովհետեւ առանձին, առանձին են աշխատում: Իսկ նրանք նոյնքան էլ խեղճ և խաւար են որքան բանւորները:



«ԺՈՂՈՎՐԴԱԳԵՏՈՒԹԻՒՆԸ» ԵՒ «ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ»  
ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ (ԲՈՒՐԺԱԿԱՆ) ՀԱՆՐԱԳԵՏՈՒ-  
ԹԵԱՆ ՄԷՋ

Ահա թէ ինչպիսի աստատուումներն բոլոր ներկայ «դեմոկրատիկ» հանրապետութիւնները: Դա բուրժուական աստատու է: Գործնականօրէն և ոչ թէ խօսքով այդպիսի հանրապետութեան ամբողջ ուժը բուրժուալիայի ձեռքին է գտնուում: Այդ Կաաճառով և բոլոր այդ դեմոկրատիկ հանրապետութիւնները իրօք բուրժուական հանրապետութիւններ են: Նրանց մէջ կարգադրութիւններ անողը բուրժուազիան է: Իսկ ընդհանուր ընտրական իրաւունքը, պարլամենտը, «ազատութիւնները», միլիցիան—այդ բոլորը միայն խաղալիք են բուրժուազիայի ձեռքին:

Թղթի վրայ գրւած է. «խօսքի, մամուլի և ժողովների ազատութիւն»: Իսկ իրօք դա կնշանակէ. ազատութիւն միայն բուրժուազիայի, միայն հարուստների համար:

Բոլոր լաւ գիտնականները, գրողները, հեռագրները կաշառւած են բուրժուազիայի կողմից: Ժողովներում ժողովրդական ճշմարտութիւնը հանգէս չի գայ: Բուրժուական հոռտորները բոլոր պարզամիտներին աչքերին թող կիշին, և իւրաքանչիւր մարդու բերանը կծեփեն, որը կփորձի բուրժուազիայից ճնշւած և վիրաւորւածներին պաշտպանել: Այդպիսի մէկի համար գժւար կլինի նրանց հետ վիճել. նրա համար դժուար է լաւ կըթութիւն ստանալ: Չէ որ քարձրագոյն դպրոցների ու գիմնազիոնների դռները միայն բուրժուազիայի զաւակներին և նրա պնակալէզներին համար է բաց:

Քոյ բանւորներն ու գիւղացիները փորձեն ժողովներ գումարել. բոլոր լաւ աները բուրժուազիային են պատկանում: Հարուստները նրանց մէջ թոյլ կտան հաւաքելու միայն նրանց, որոնք բուրժուական կուսակցութիւններն ու անասական իշխանութիւնը կաշառապանեն:

Բոլոր լաւագոյն գրողները գրում են բուրժուազիայի պահպանութեան համար: Բոլոր մեծ լրագրները, որոնց համար հարկաւոր են խոշոր տպաբաններ դառնում են խոշոր տուղերի ձեռքին: Մամուլի տպատութիւնը բանւորների և գիւղացիների համար միայն խօսքով գոյութիւն ունեն: «Տպիր ինչ որ ուզում ես», միայն ճարիր դրա համար տպարան, բանւորներ թուղթ: Իսկ տպարան, թուղթ, գրողներ—այդ ամենը զնեւ է բուրժուազիան:

Լրագրներում տպւում են լուրեր այն մասին թէ, ինչ է կատարւում աշխարհում: Այդ լուրերը լրագրներին պարտաւ, ազտա ժամանակ ունեցող, բարեկամները չեն բերում: Այդ լուրերը հաւաքում են յատուկ աշխատակիցներ, գործակալներ, թղթակիցներ: Կազմւում են դործակալական և ընդարձակ գրասենիակներ, որպէս զի լուրեր հաւաքեն տյն մասին, թէ որտեղ ինչ է կատարւում: Այդ դործակալութիւնների համար ևս շատ դրամ է հարկաւոր: Այդ պատճառով և դրանք էլ բուրժուազիայի ձեռքին են գտնւում: Այդ պատճառով էլ նրանք լսում են այն ամենի մասին ինչ ձեռնտու չէ տէրերին և պատմում են միայն տյն ինչ շահաւէտ է նրանց: Նրանք դիտակցօրէն ստում են յօգուտ տէրերի: Եւ լրագրները տպւում են այդ սուտը, յերկրանքներով



մթաղնում բանտարները և գիւղացիների դիտակցու-  
թիւնը:

Այդ պատճառով դուրս է գալիս, որ, չնայելով  
որ բոլորն էլ իրաւունք ունեն պարլամենտի  
ընտրութիւններին մասնակցել և ընտրւել, այնտեղ ընկ-  
նում են միայն կապիտալի գործակատարները:  
Միայն խօսքով է որ իբր ամբողջ ժողովուր-  
դըն ընտրում է պարլամենտ: Իրօք բոլորին կառավա-  
րում են հինգ, տասը խոշոր տուգեր, Նրանք են հրա-  
մաններ հրատարակում և մինիստրներ նշանա-  
կում: Ամերիկայում և Ֆրանսիայում պարլամենտի  
պատգամաւորների երեք քառորդը խոշոր բանկերի  
գործավարներ են և կառավարութեանը նշանակում և  
փոխում են բանակայիս թագաւորները:

**ԳԵՄՈՒՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԴԻԻՐԱՅՆՈՒԹ**  
**է ԲՈՒՐԺՒԱԶԻԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ**

Պարզամիտի մէկը կարող է ասել. «Դուք  
ինքներդ քիչ առաջ ասացիք, որ Ամերիկայում և Ֆր-  
անսիայում դեռ ամեն ինչ այնպէս չէ կազմակերպւած,  
ինչպէս պահանջւում է դեմոկրատական հանրապե-  
տութեան մէջ: Օրինակ. այնտեղ բոլորը չեն մասնակ-  
ցում պարլամենտի ընտրութիւններին: Կանայք ընտ-  
րութիւններին չեն մասնակցում: Կան նաև ուրիշ բա-  
ցեր նրանց կոնստիտուցիայի (պետական կազմակերպու-  
թիւն) մէջ: Կարելի է հէնց և դա է պատճառը, որ այդ-  
տեղ իսկական դեմոկրատական հանրապետու-  
թեան մէջ բուրժւադիան այդքան ազատ չի լինի:

Այն ամենից, ինչ, որ ասացինք, երեւում է, որ

Ֆութիւնը բացերի մէջ չէ, այլ իրականը աստառի մէջ է: Ինչպէս ուզում են ծածկեն այդ բացը, ինչ մահա-  
դով ուզում ես կարկատիւ փթած աղբերը, հազուադէպ  
վատը կլինի:

Բայց իրականը միայն աստառը չէ: Բանը նրա-  
նումն է, որ դեմոկրատական հանրապետութեան հենց  
տրտաքինը, երեսը այնպէս է կազմւած, որ բուրժու-  
գիայի համար աւելի հեշտ է տիրապետել քանութիւնների  
և դիւզացիների վրայ:

Բացի ընդհանուր ընտրողական իրաւունքից, ընդ-  
հանուր ազատութիւնից և այլ հրաշալի կանոններից,  
դեմոկրատական հանրապետութեան մէջ կա նաեւ  
մէկ ուրիշ ոսկէ կանոն:

Այդ կանոնը այսպիսի է: Օրէնսդրական իշխա-  
նութիւնը պէտք է առանձնացւի՝ գործադիր և դատա-  
պան իշխանութիւնից: Չպէտք է այնպէս լինի, որ  
միեւնոյն ձեռքում (օրինակ պարլամենտի) լինի և օ-  
րէնքների գրելը նրանց գործադրելը և բարձր դատա-  
կան իշխանութիւնը: Օրէնքները գրել, նրանց գործա-  
դրել և դատել կարող են առանձին իրաւից անկախ  
հիմնարկութիւններ:

Եթէ այլ կերպ վարւել, ասում են դեմոկրատա-  
կան հանրապետութեան պաշտպանները, կամայական  
նութիւն կատացւի: Օրինակ, եթէ միեւնոյն չինովնիկը  
և նահանգապետ լինի և միեւնոյն ժամանակ դատա-  
ւոր լինի, նա ճիշտ չի դատի: Ենթադրենք, նահանգա-  
պետը որեւէ մէկին հրամայել է (օրինակ գիւղացուն)  
քնալ ճանապարհը նորոգել: Իսկ նա, ում հրամայել  
է, չի ուզում իրագործել, ասում է, որ նահանգապետը  
տալօրինի հրաման է արձակել: Եթէ նահանգապետը



առանձին է դատաւորը առանձին, այն ժամանակ զիւրացին և նախանգաւարը կզնաւ դատաւորի մօտ և դատաւորը կորոշէ թէ նրանցից ով է ճիշտը:

Իսկ եթէ նախանգաւարը միևնոյն ժամանակ և հրամայում է և դատում, ապա կնշանակէ նա պիտի դատէ զիւրացուն և ի հարկէ, գործը ճիշտ չի որոշէ՝ իր քմահաճ ոյքով: Այդ պատճառով չի կարելի գործադիր իշխանութիւնը դատականի հետ միացնել:

Զի կարելի միացնել նաև օրէնսդրական իշխանութիւնը (օրէնքների գրելու իրաւունքը) գործադրականի հետ: Այլ կերպ կամայականութիւն կստացւի: Եթէ նախանգաւարը ինքը գրէ օրէնքները, նա նրանց ամեն օր կվոխի ինչպէս ինքը բարեհաճէ: Նա ով հրամայներ է արձակում միշտ էլ ուզում է, որ նրանք արագ և անշեղ գործադրեն. եւ մեր նախանգաւարը կսկսի դրել այնպիսի օրէնքներ, որ բոլորին էլ նեղը կլծէ Քայց անհրաժեշտ է, որ լինեն հիմնական կայուն օրէնքներ, որպէսզի իւրաքանչիւրը կարողանայ օրէնքից օգտուել: Այդ պատճառով և չի կարելի օրէնսդրական իշխանութիւնը գործադրականի հետ կապել:

Այդ պատճառով և ղեմակրատական իշխանութեան մէջ այնպէս է արւած, որ միայն պարլամենտը կարողանայ օրէնքներ հրատարակել (նոյնպէս և մինիստրներ նշտնակէ և հսկէ, ստուգէ նրանց աշխատանքը) կառավարութեանը և չլինով նիկներին իրաւունք է արւած միայն օրէնքները գործադրել և կարգադրութիւններ անել: Իսկ դատաւորներին՝ դատելու և որոշելու ով գործադրեց օրէնքը, կամ ով խախտեց:

Ոսկէ կասն. բայց ինչ է ստացւում նրանից: Ստացւում է այն, որ բոլոր չինովներին, զենեւալ-

ները և դատաւորները—դրանք յատուկ ուժեր են, որ պարլամենտից համարեա ոչ մի կախում չունեն: Նրանց իշխանութիւնը տաանձնացրած անջատած է պարլամենտի իշխանութիւնից: Պարլամենտը մի երկու տասնեակ բանւորներ և դիւղացիներ են ընկնում: Բայց այստեղ այդ պատգամաւորները, ժողովրդի ներկայացուցիչները կարծես մէջօկ են ընկնում: Նրանք չեն կացող ցուցմունքներ տալ չինովսիկներին: Չինովսիկները կարգադրում են ինքնակամ:

Իսկ սկզբում մենք տաացինք, թէ ովքեր են այդ չինովսիկները, գեներալները, դատաւորները, դրանք հարուստների բարեկամները՝ նրանց պնակալէզներն են: Շնորհիւ գործադիր իշխանութեան օրէնսդրականից անջատելուն ժողովուրդը ինքը չի կարող կարգադրել պետութեանմէջ: Կարգադրութիւններ անում են «անկախ» չինովսիկներ: Իսկ այդ չինովսիկները շատ են կախւած բուրժուազիայից:

Բայց դա բաւական չէ: Որպէսզի չինովսիկները չորորովին անկախ և անշահախնդիր լինին, գեմոկրատական հանրապետութեան մէջ նրանք մշտական են անփոխարինելի: Դա կնշտնակէ, որ եթէ որեւէ պաշտօնի դուռն կանգնում է որեւէ չինովսիկ ապա նրան չի կարելի փոխել, մինչև որ նա չմեռնի, կամ ինքը չհեռանայ ծառայութիւնից, կամ մինչև զատարանը մեղքերի համար չհեռացնէ նրան պաշտօնից: Իսկ դիւսահմանած է անա թէ ինչու: Եթէ նահանգապետը կարողանար ամեն օր և ամեն ժամ հեռացնել իւր ենթակայ պաշտօնեային, ապա նա չափազանց մեծ իշխանութիւն կ'ընկերցնէ իր ձեռքը: Նա կարող է ամեն ինչ



շուռ տալ ինչպէս ինքը կկամենայ, Իսկ դա չի կարելի  
—կամայականութիւն չի կարելի:

Դարձեալ լաւ կանոն: Իսկ նրանից ստացուած է  
այն, որ ժողովուրդը չի կարող ստիպել չինովնիկին  
գարեւել այնպէս ինչպէս իրեն հաճելի է: Դրանից աւելի  
պակաս ժողովուրդը ինքը կկարողանա պետութեան  
մէջ կարգադրութիւններ անել:

Բայց գուցէ, եթէ չինովնիկները ժողովրդից ազատ  
են, յամենայն դէպս պարլամենտը նրան հաւատարիմ  
է ծառայում: Դա էլ այդպէս չէ: Պարլամենտի ընտ-  
րութիւնները լինում է մէկ կամ երկու տարին մէկ  
անգամ: Աւելի յաճախ չի կարելի անել: Հարկաւոր է,  
որ ընտրութիւններից առաջ ընտրողները լաւ մտածեն,  
թէ ում ընտրեն: Հարկաւոր է, որ բոլոր ընտրողներին  
ցուցակներ լինեն մէջ անց կացնել: Հարկաւոր է, որ բոլորը  
առանձին առանձին տոմսեր տան: Դա երկար պատ-  
ժութիւն է: Դա թանկ կնստէ: Դա կարելի է անել  
միայն տարին, կամ երկու տարին մէկ անգամ:

Այդ տարւայ ընթացքում պատգամաւորները չեն  
փոխւում: Նրանք բաժանւում են ժողովրդից, գործում  
են իրենց կամքով: Պարզ է, որ այդպիսի անփոխարի-  
նելի (չփոխւող) պատգամաւորներով հեշտ կարելի է  
խաբել ընտրողներին: Եւ այդ նրանք ամեն տեղ ա-  
նում են ամինալաւ ձևով:

«Դէ, ընդհանուր, ուղղակի և գաղտնի ընտրու-  
թիւններն արդէն, տնկասկած, լաւ բան են»,—կասե-  
մծգ որեւէ պարզամիտը: Դա էլ ճիշտ չէ:


Այդ ուղղակի, ընդհանուր ընտրութիւններն էլ  
հասցնում են այն տեղը, որ ժողովուրդը չի կարողա-  
նայ ստանալ այն, ինչ իրեն անհրաժեշտ է:

Ընտրութիւնները ընդհանուր են. դա կնշանակէ, որ ժողովներում ընտրութիւնից առաջ բանւորներն ու բուրժուաները, գիւղացիներն ու կուլակները խառնուում են մէկ խմբի մէջ: Այդպիսի ընտրութիւնները ոչ թէ միացնում են բանւորներին և գիւղացիներին իրենց թշնամիների դէմ, այլ ցրում են նրանց բուրժուազիայի միջև: Հարուստների և կուլակների համար աւելի հեշտանում է շահագործել, խաբել բանւորներին և գիւղացիներին:

Ընտրութիւնները պաղտնի են. դա կնշանակէ, որ իւրաքանչիւր բանւոր առանձին է քէտրկում: Նրանց՝ վրայ, ճիշտ է բուրժուայի հսկողութիւնը չկայ: Բայց չկայ նաև նրա ընկերների հսկողութիւնը: Նա ագիտութեամբ կարող է իր ձայնը բանւորութեան թշնամուն տալ:

Բայց ուրիշ իմաստով էլ այդ ընտրութիւնները բաժանում, թուլացնում են բանւորներին: Նրանք ստիպում են նրան միայն խօսել և ոչ թէ գործել: Ընտրութիւններին որոշում է ամբողջ պետութեան և բանւորութեան բազդը: Բայց ամեն տեսակ բռնութիւն, ամեն տեսակ «ճնշում» ընտրութիւնների ժամանակ արգելւած է: Թուլատրւում է միայն խօսել, համոզել նրանց, ով պէտք է ընտրէ, ապա՝ տամս տալ: Իսկ իւրաքանչիւր խօսք ուժ կունենա, երբ նրան հետևում է գործը: Բայց այն ժամանակ ամենախտւար մասսան տեղից շարժւէ, կբարձրանայ ընդհանուր գործի համաժողովը:

Բայց դա կարելի է միայն խօսել, «համոզել», կուլակներին և ընտրութիւնները սովոր-





բեցնում են ժողովրդին միայն շատախօսել իր բազդի մասին և ոչ թէ կռել նրան իր ձեռքերով:

Իսկ հէսց որ պարլամենտը ընտրւեց, գործը վերջացած է: Պետութեան մէջ ամբողջ իշխանութիւնը տրւում է պարլամենտին: «Նրան խանգարել աշխատել» չի կարելի: Նոյնպէս և չի կարելի գործով կռել իր թշնամիներին դէմ: Չի կարելի նրանց վրայ բարձրացնել բանւորական և գիւղացիական բռնեցքը. դեմոկրատական հանրապետութեան մէջ բոլորը հաւասար են և բոլորն էլ «անձեռնմխելի են», ոչ ոքի չի կարելի ձեռք տալ: Միայն կարելի է չինոքնիկներին և տէրերին համոզել, որպէսզի ժողովրդին չճնշեն, համոզել գայլերին, որ նրանք դառնորդառնան: Ամբողջ «պարլամենտարիզմը» այն տեսակէան ունի, որ ժողովուրդը պէտք է իր կարծիքը յայտնէ և ոչ թէ գործէ: Նրա փոխարէն գործում են պատգամաւորներն ու չինովնիկները: Իսկ նրանց թեի տակ նաև աշխատում են կալածատէրերն ու բուրժւաները. նրանք օրէնքով բանւորից և գիւղացուց հօթ մորթի են քերթում:

### ՊԷՏՏ Է ԲՈՒՐՃԻԱԶԻԱՅԻ ՈՒԺԸ ԿՈՏՐԵԼ

Ինչպէս անել, որ պետութեան մէջ կարգադրութիւններ անող տէրը լինի բանւոր, աշխատաւոր ժողովուրդը: Դրա համար պէտք է ոչ թէ հագուստի երեսը, այլ հագուստն ամբողջովին փոխել: Քանի որ հողը, գործարաններն ու արհեստանոցները և նամանաւոր՝ բանկերը հարուստների ձեռքին է, նրանք միշտ էլ բանւորի և գիւղացու վրայ հրամայողը կլինեն: Ինչպիսի ընտրութիւններ էլ որ կազմակերպէք,

ինչպիսի պարլամենտ էլ հրաւիրէք, ինչպիսի ազատութիւններ էլ յայտարարէք, հարուստներն ամեն ինչ իրենց կողմը շուռ կտան—և քնտրութիւնները, և պարլամենտը, և ազատութիւնները:

Պէտք է խորտակել բուրժուազիայի ուժը: Իսկ նրա ուժը հարստութեան, կապիտալի մէջն է: Պէտք է խլել նրա ձեռքից բանկերը, գործարաններն ու յանձնել աշխատաւոր ժողովրդին:

Իսկ ի հարկէ չի կարելի խօսքով, համոզելով անել. չի կարելի համոզել գայլին, որ գառան մսով չկերակուի: Պէտք է ուժով տապալել բուրժուազիայի տիրապետութիւնը, պէտք է խլել նրանից այն ամենը, ինչով նա ուժեղ է: Իսկ դրա համար հարկաւոր է զէնքը ձեռքին կռել, սոցիալիստական յեղափոխութիւն անել:

Սոցիալիզմը—պետական այն ձեւն է, երբ հողը, գործարանը, արհեստանոցները, բանկերը պաշտօնաւորն են ամբողջ աշխատաւոր ժողովրդին և ոչ թէ առանձին տէրերին: Անպայման ամբողջ ժողովրդին, չի կարելի հարուստներից խլել բանկերը, գործարաններն ու արհեստանոցները և բաժանել չքաւորութեան մէջ: Գործարանները բաժանել չի կարելի: Իսկ եթէ կարելի էլ լինէր (բաժանել խմբերի և բաժանել գործարանները խմբերի մէջ), ապա այդպիսի պարագաներում շուտով մէկը, որ աւելի ճարպիկ է, սուս կնկնէր և տէր կդառնար գործարանին: Նորից ժողովրդի մեծ մասը կիսաքաղց կեանքով կապրէր:

Սոցիալիստական յեղափոխութիւն կոչուում է աշխատաւոր ժողովրդի մի այնպիսի ապստ-



տամբութիւն, երբ բանւորը գօտով խլում է բուրժւա-  
զիայից նրա ամբողջ հարստութիւնը, որպէսզի նրան  
բոլորը միասին տիրեն: Այդպիսի յիպոփոթութիւն  
տեղի ունեցաւ Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերին:

### ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԵՒ ՁԳԱՒՈՐ ԳԻՒՂԱՅԻՈՒԹԵԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Բուրժւազիային չի կարելի խօսքով յաղթել: Ձի  
կարելի նոյնպէս նրան տալալիկ և ապա՝ բռնորդն բա-  
ցարձակ իրաւունք տալ--արա ինչ ուզում ես.

Պէտք է երկար կռւել բուրժւազիայի հետ Նա  
մէկից չի զիջի իր հարստութիւնը: Նա մինչև մահ  
կկռւի: Բոլոր նրա բարեկամներն ու աղգակամները,  
բոլոր պնակալէզները, — չինովնիկները, սպանները,  
կրթած մարդիկ — նրա համար կը կռւեն, դաւադրու-  
թիւններ ապստամբութիւններ կը կազմակերպեն նոր  
կարգերի դէմ: Նրանց հետ պէտք է մէկ ամբողջ պա-  
տերազմ մղել՝ քաղաքացիական կռիւ: Իսկ որպէսզի  
կռիւ մղել, հարկաւոր է կառավարիչներ ունենալ,  
պէտք է իշխանութիւն ունենալ: Բուրժւազիաս-  
տներ իր հին իշխանութիւնը: Նա պաշտպանում էր  
բուրժւազիային, օգնում էր նրան բանւորներին և  
գիւղացիներին կաշին քերթել: Երբ բանւորներն ու  
գիւղացիները սոցիալիստական յեղափոխութիւն են  
անում, նրանք ոչ միայն բուրժւազիայից խլում են  
նրա հարստութիւնը — նրա ուժի աղբիւրը, այլ նաև  
տալալում են հին իշխանութիւնը: Այդ իշ-  
խանութիւն տեղը անմիջապէս պէտք է զնեկ նոր իշ-  
խանութիւն:

Այդ իշխանութիւնը ամենից առաջ անհրաժեշտ է, որպէսզի ասպատամբութիւնը ղեկավարէ և, բանաոր- ներին կոխ առաջնորդող վարչութիւն լինի: Երկրորդ՝ այդ իշխանութիւնն անհրաժեշտ է, որպէսզի վերաց- նէ հին օրէնքներն ու կանոնները, կուէ յեղափոխու- թեան թշնամիների հետ (հակայեղափոխականների): Երրորդ՝ այդ իշխանութիւնն անհրաժեշտ է, որպէսզի նոր կարգերը կազմակերպէ:

Այն որ եթէ հարկաւոր է, որ բուրժուազիայից վերցած հարստութեանը ընդմանուր ուժերով տիրա- պետել, ապա դրա համար հարկաւոր է նոր, ժողովրդից ընտրած իշխանութիւն նշանակել. եթէ այլ ևս ա- ոանձին տէրեր չպէտք է լինեն, այլ բոլոր գործարան- ներն ու արհեստանոցները պէտք է ունենան մէկ ընդ- հանուր տէր, ապա հարկաւոր է նրանց կառավարել, իսկ դրա համար հարկաւոր է բանաորա-գիւղացիական իշխանութիւն, բանաորա-գիւղացիական կառավարու- թիւն: Անհրաժեշտ է, որ ոչ միայն Մոսկւայում կամ Պետրոգրադում նոր կառավարութիւն նստի, այլ որ գաւառներում և գիւղերում մարդիկ այնպէս ապրեն, ինչպէս Աստուած նրանց կթելադրէ: Հարկաւոր է, որ իշխանութիւնը ղեկավարի մաքող երկիրը, որ ամեն տեղ նա օգնականներ և աշխատակիցներ ունենայ: Պէտք է հին չինովնիկական բուրժուական պետութեան փոխարէն ստեղծել նոր պետութիւն:

Ինչպիսի պէտք է լինի նոր իշխանութիւնը, նա պէտք է լինի ուժեղ, անսահմանափակ և միաշնական: Պատերազմի ժամանակ վարիչները կարգադրում են այնպէս, որ իւրաքանչիւրը նրանց անմիջապէս լսում է և անվրէպ կատար անում: Ոչ ոք չի սահմանափա-



կում, ճնշում դիւստրական իշխանութեանը: Մենք կռիւ ենք մղում բուրժուազիայի հետ: Հետեւապէս և անհրաժեշտ է ուժեղ, երկաթէ, միաբան իշխանութիւն, որը այլ կերպ կոչւում է զիկտատուրա \*): Բուրժուազիան դա էլ շատ լաւ է հասկանում: Բոլոր այն շրջաններում ուր բուրժուազիան դեռ տիրապետում է նա էլ այնտեղ հիմնում է իւր բուրժուական զիկտատուրան, դէնքերալներին նշանակում է լիակատար և անսահմանափակ իրաւունքներով պետեր:

Տարբերութիւնը բանւորա-գիւղացիական իշխանութեան (զիկտատուրայի) և բուրժուական զիկտատուրայի միջև այն է, որ առաջինին ընտրում են բանւորները և գիւղացիները խորհուրդները: Այդ իշխանութիւնը կապիտալի նախկին գերիներին կռիւ է առաջնորդում, խեղդում է բուրժուազիային՝ իրականացնում է սոցիալիզմը: Իսկ բուրժուական զիկտատուրաներին նշանակում է հարուստների մի խմբակը, նրա համար, որպէսզի՝ բանւորներից և գիւղացիներից, բանկերը գործարաններն ու հողը լեւ լալեն: Բացի դրանից բանւորա-գիւղացիական զիկտատուրայի ժամանակ հրամաններ արձակողը մէկ մարդ՝ ինքնակալ «զիկտատուրը» չէ: Բանւորների և գիւղացիների զիկտատուրաները, դա բոլոր ընտրովի խորհուրդներն են իրենց գլուխ ունենալով ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը: Բուրժուազիայի մօտ հրամաններ են արձա-

---

\*) «Զիկտատուր» կոչւում է այն մարդը, որը այնպիսի իշխանութիւն ունի, որ ունի ինչ ուզի կհրամայի և նա մահաւան պատժի վտանգի տակ պէտք է իրագործէ: «Զիկտատուրան» այն իշխանութիւնն է, որ ունենում են այդպիսի զիկտատուրաները:

կում ինքնակամ փոքրիկ Թաղաւոր դիկտատորները. օրինակ Դոնի վրայ մի ժամանակ, գինեւալ կրտսնովը, Սիբիրում ագմիրալ Կոլչակը:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Որպէսզի յաղթահարել բուրժւադիւային և սոցիալիզմ ստեղծել անհրաժեշտ է բանւորադիւղացիական իշխանութիւն: Խոչընդէս նրան կողմակերպել: Խոչընդիսի հետ քաշել հին աստուծի վրայ:

Դուրսէ դրա համար դեմոկրատական հանրապետութիւնը պէտք զայ: Ինչ կարող է լինել աւելի լաւ բուրժւադիւային վճռիչ ևնք, նրանից նրա ուժը, բանկերը, գործարաններն ու հողը խլի ևնք: Կնշանակէ այժմ կարելի է լաւ պարլամենտ կազմակերպել, իսկական ընտրութիւններ առանց խաբէրայութիւնների, բոլորին իսկական ազատութիւն տալ: Սոյալէս էլ առաջարկում են անել համաձայնականները: Աւելի լաւ կարելի է իրականացնել սոցիալիզմը, եթէ նրան աւելացնենք դեմոկրատական հանրապետութիւնը:

Բայց հէնց բանն էլ նրանումն է, որ եթէ բոլորին էլ հաւասար իրաւունքներ տալ (այսինքն ուրեմն նաև բուրժւադիւային), կնշանակէ պէտք է դադարել նրա և նրա պնակալէզների դէմ կռիւաւց: Եթէ բոլորին էլ թուլատրել համախմբել միանալ միութիւնների մէջ, կնշանակէ, որ պէտք է թոյլատրել յեղափոխութեան թշնամիներին ազատ ապստամբութիւններ կազմակերպել, ոտղմական խմբերի մէջ միանալ: Եթէ



Թոյլատրել նրանց տպել ինչ որ ուզում են. կնշանակէ պէտք է Թոյլատրել ազատ տպագրել բուրժաւիկան Թոուցիկները և կոչերը:

Իսկ առանց մամուլի, ժողովների և միութիւնների ընդհանուր աղատութեան, չի կարելի ընդհանուր ընտրութիւններ կազմակերպել:

Բանից դուրս է դալիս, որ չի կարելի կազմակերպել այդպիսի ընտրութիւններ երբ բուրժադիպի հետ մահւան և կեանքի կռիւ է մղում: Այդպիսի ժամանակ բանւորներն ու գիւղացիները պէտք է ընտրեն իրենց ռազմական կազմակերպութիւնները և ոչ թէ պարլամենտը: Ժողովուրդը ժամանակ չունի ընտրութիւններին շատախօսելու: Նա պէտք է գործէ: Ժողովրդին հարկաւոր չէ այնպիսի պարլամենտ, որ նստած է Պետաղբաղում, կամ Մոսկւայում և օրէնքներ է հրատարակում առանց ժողովրդի կամքն հարցնելու: Նրան հարկաւոր են այնպիսի խորհուրդներ, որ լինեն ժողովրդի ձեռքին, առաջնորդեն ժողովրդին դէպի կռիւ, և օրէնքներ գրեն, և անմիջապէս այդ օրէնքները գործադրեն:

Իսկ ինչ անել չինովնիկներին հետ: Կարելի է նրանց Թոյլ տալ, որ լինեն բացարձակ անկախ և անփոխարինելի: Բայց չէ որ, այն ժամանակ նրանք բանւորին և գիւղացուն կմատնեն բուրժադիպին: Նրանց վրայ պէտք է աչք պահել: Իսկ առանց դատական հիմնարկութիւնների անկախութեան և անփոխարինելիութեան դեմոկրատական իշխանութիւնը գոյութիւն ունենալ չի կարող:

Դուրս է դալիս, որ սոցիալիստական յեղափոխութեան ժամանակ չի կարելի խօսել դեմոկրատա-

կան հանրապետութեան մասին: Յանուր ժողովրդին հարկաւոր է պրոլետարիատի և դիւղացիութեան դիկտատուրա և ոչ թէ խաղաղ դեմոկրատիա: Աշխատուոր ժողովուրդը պէտք է հարւածէ բուրժուազիային, և ոչ թէ նրան իրաւունք ու ազատութիւն տայ:

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԵՒ ԳԻՒՂԱՅԻՆԵՐԻ ՊԵՏՈՒԹԻՒՆ Է**

Ի՞նչ անիլ ուրեմն—վերացնել ամեն տեսակի բնօրինակներ, ոչ ոքի ոչ մի իրաւունք չտալ և ինքնակալ ոլեա նշանակել: Հասկանալի է, ոչ: Պէտք է միայն բանւորներին և դիւղացիներին իրաւունքներ տալ, միայն նրանց թոյլատրել պատգամաւորներ ընտրել, և ամեն տեղ լիակատար իշխանութիւն տալ բանւորաւոր և դիւղացիական պատգամաւորների խորհուրդներին: Պէտք է Խորհրդային իշխանութիւն կազմակերպել և ոչ թէ «դեմոկրատական» (պարլամենտական) հանրապետութիւն:

Խորհրդային իշխանութեան մէջ ամբողջ իշխանութիւնը ընտրովի է: Ամբողջ աշխատաւոր ժողովուրդը ընտրում է նրան: Եւ իւր պատգամաւորներին միջոցով ժողովուրդը առանց սահմանափակումների ամեն ինչ կարգադրում է: Դա դիկտատուրա է—անխնա երկաթեա արագ իշխանութիւն: Բայց դա իրեն բանւոր դասակարգի դիկտատուրան է, նա բանւորներից և դիւղացիներից է կազմւած, իր ամբողջ էութեամբ:

Խորհրդային հանրապետութեան մէջ պարլամենտ չկայ, այլ կայ պատգամաւորների խորհուրդ: Նրա ընտրութիւններին մասնակցում են միայն բանւորներն



ու գիւղացիները: Իւթաքանչիւր պատգամաւորի կարելի է փոխել, եթէ նա դուր չի գալիս ընտրողներին: Դա հեշտ կարելի է անել, որովհետեւ պատգամաւորներ ընտրում է իւրաքանչիւր գործարանը, արհեստանոցը, գիւղը: Եթէ ընտրութիւնները լինէին այնպէս ինչպէս պարլամենտի ժամանակ—նախնականից և ամբողջ քաղաքից, հնարաւոր չէր լինի պատգամաւորին փոխել: Որպէսզի հեռացնել նրան պարլամենտից հարկաւոր կ'լնէր, որ ամբողջ քաղաքը, կամ նահանգը նոր ընտրութիւններ անեն: Իսկ առանձին գործարանը կամ գիւղը, առանց դժւարութեան, կարող են պատգամաւորին յետ կանչել, փոխել: Այդ պատճառով և քանից դուրս է գալիս որ խորհուրդը չի կտրւում իւր ընտրողներից: Նա միշտ իւր ընտրողների հետ միաքան կատարում է իրեն ուղարկողների կամքը:

Պարլամենտը միայն օրէնքներ է գրում, իսկ չինովնիկները իրագործում են նրանց: Իսկ խորհուրդները իրենք հրահրակում են օրենքները իրենք էլ գործադրում: Խորհրդային չինովնիկները գտնւում են խորհրդի հրամանատարութեան ներքոյ և կատարում են այն, ինչ որ խորհուրդը կը կարգադրէ: Իսկ խորհուրդը ժողովրդի հրամանատարութեան տակ է: Յետապելում է, որ ժողովուրդը շարունակ ինքն է կռւում իր բաղդը, արագ առանց յապաղումների: Ինքն է որոշում ինչ անել և ինքն աշուժւում այն, ինչ որոշել է:

Միայն այդպիսի կարգերում հեշտ կարելի է ջախջախել բուրժուազիայի ուժը և նոր կեանք կառուցել:

Իսկ վախճնալ, որ դրանից կամայականութեւն կստացւի, չի կարելի: Եթէ խորհուրդները ժողովրդի հրամանատարութեան ներքոյ են գտնւում, ապա թիւ

կամայականութիւն կարող է անել նա ինքն իրեն  
պիտի: Բուրժուական կարգերում օրէնսդիր իշխանու-  
թիւնը հարկաւոր էր բաժանել գաղթադիր իշխանու-  
թիւնից, որովհետեւ այնտեղ այդ երկուսն էլ բուրժու-  
պետի ձեռքին էին: Այնտեղ նահանգապետը օրէնք-  
ներ չպէտք է գրէր որովհետեւ նրան բուրժուական էր  
նշանակել: Եթէ Թոյլատրէին նրան օրէնքներ գրել նա  
այնպիսի սահմարձակութիւններ Թոյլ կտար ժողովրդի  
վերաբերմամբ, որ ժողովուրդը կապտաւորէր: Այդ  
պատճառով և բուրժուական վախճանում էր կամայա-  
կանութիւնից:

Բուրժուական հանրապետութեան ժամանակ ամ-  
բողջ իշխանութիւնը պատկանում է պարլամենտին,  
որ ժողովրդից հետո նստած է Մոսկայում կամ Պե-  
տերբուրգում: Խորհրդային հանրապետութեան ժամա-  
նակ իւրաքանչիւր նահանգ, գաւառ, քաղաք, գիւղ  
ունի իւր խորհուրդը: Իւրաքանչիւր այդպիսի խոր-  
հուրդ ինքը որոշում է թէ ինչ պէտք է անել և ինքն  
էլ անում է այդ: Եւ ստացւում է որ իրօք ողջ իշխա-  
նութիւնը պատկանում է ամբողջ ժողովրդին, և կրի  
բոլոր անկիւններում և ոչ թէ պարլամենտի պատգա-  
մաւորներին:

Ի հարկէ գիւղաշրջանային, կամ գիւղական խոր-  
հուրդը որոշում և կարգադրում է միայն իր գիւղա-  
շրջանի և գիւղի գործերը: Բոլոր համապետական  
նշանակութիւն ունեցող գործերը որոշում է խոր-  
հուրդների համառոտական համագումարը, իսկ երբ  
այդպիսին չկայ, խորհուրդների կենտրոնական գոր-  
ծողիւր կոմիտէն: Իսկ այդ համագումարին հաւաք-  
ւում են բոլոր նահանգային, գաւառային, քաղաքային



և գիւղական բանտրական և գիւղացիական խորհուրդ-  
ների ներկայացուցիչները: Նրանք էլ ընտրում են  
կենտրոնական գործադիր կոմիտեն, իսկ կենդրոնա-  
կան գործադիր կոմիտեն (կամ համագումարը) նշա-  
նակում է կամ փոփոխում բանտրա-գիւղացիական  
կառավարութիւնը՝ ժողովրդական կոմիտարների խոր-  
հուրդը: Այդպիսով ամբողջ աշխատատեղի ժողովուրդը  
ընտրում և փոփոխում է իր կառավարութիւնը:

Բուրժուական հանրապետութեան մէջ չինով-  
նիկները անկախ են ժողովրդից, անփոխարինելի: Խոր-  
հրդային հանրապետութեան մէջ նրանք բոլորը են-  
թարկւում են խորհրդին, խորհուրդն էլ կարող է  
նրանց փոփոխել, երբ որ ուզենաւ: Մի քանի չինով-  
նիկներ օրինակ. ուսուցիչները ընտրւում և փոխւում  
են նոյն իսկ ոչ թէ խորհրդի, այլ ուղղակի բանտր-  
ների և գիւղացիների կողմից:

«Բայց և այնպէս, կասեն խորհրդային իշխանու-  
թեան թշնամիները, մեզ մօտ բոլորը չեն մասնակե-  
ցում խորհուրդների ընտրութիւններին: Գուք չոսնէք  
ընդհանուր, հաւասար, գաղտնի և ուղղակի ընտրու-  
թիւններ»:

Միանգամայն ճիշտ է խորհրդային իշխանու-  
թեան մէջ ընտրական իրաւունքը ընդհանուր և նոյն  
իսկ գաղտնի չէ: Ընտրում են միայն բանտրներն ու  
ծառայողները, քաղաքում, իսկ գիւղերում միայն  
չքաւորները և հողազուրկ գիւղացիները և այդպիսի-  
ները, որոնք իրենք են աշխատում իրենց համար և  
վարձու մարդկանց չեն շահագործում: Ընտրել չեն  
կարող հարուստները, ուրիշի աշխատանքով, կամ կա-  
պիտակի եկամուտներով ապրողները: Ընտրել չեն

Պարող քահանաները նախկին, պոլիցիականները, ժամ  
դարմները և նման մարդիկ:

Դա ճիշտ է: Բայց չէ որ խորհրդային հանրա-  
պետութիւնը հարուստների հետ բարեկամութիւն չի  
աւնում: Նա ցանկանում է նրանց ճնշել, զրկել նրանց  
իրենց հաստատութիւնից: Խորհուրդները դրանք բոլոր  
ժապիտայի դէմ կուի սազմական միութիւններն են:  
Նրանք բանւորներին և գիւղացիներին միացնում են  
դասակարգային կուի համար: Հասկանալի է, որ հա-  
րուստներին և ձրիակերներին այնտեղ չպէտք է թող  
նել:

Բայց նոյն իսկ հարուստների և ձրիակերների  
համար խորհուրդների դռները փակ չեն: Թող նրանք  
իրենց հարստութիւնը տան խեղճերին, թող սկսեն  
աշխատել, թող բանւորների և գիւղացիների ընկերներ  
դառնան, այն ժամանակ նրանք էլ իրաւունք կունենան  
ընտրելու: Բանւորներն ու գիւղացիներն ապում են  
հարուստներին և կուլակներին. «Դուք ձեզ համար  
ձեռք կըբերէք բոլոր իրաւունքները, եթէ սկսէք աշխա-  
տել: Իսկ եթէ ինքներդ չէք ուզի մենք ձեզ կեփենք  
մեր կաթսայի մէջ և այն ժամանակ, երբ դուք էլ  
կդառնաք այնպէս ինչպիսին մենք ենք, երբ մենք  
ձեզ կըյաղթահարենք, այն ժամանակ դուք էլ կըտրէք:  
Այն ժամանակ խորհրդային հանրապետութեան մէջ  
էլ կլինի ընդհանուր ընտրական իրաւունք»:

Դուք ասում էք մենք գաղտնի ընտրութիւններ  
չունենք: Դադարի ընտրութիւնները մեզ հարկաւոր  
էլ չեն: Նրանք կային և պէտք էին բուրժւական կար-  
գերի ժամանակ: Այն ժամանակ բանւորներն ու գիւ-  
ղացիները վախենում էին իրենց մարդիկն ընտրել:



Այն ժամանակ հարկաւոր էր թղթի կտորների վաճառքը և ծածուկ ձգել ընտրական տուփերը: Իսկ այժմ մենք ոչ ոքից էլ չենք վախենում: Մենք բացալձափ կուռւմ ենք բուրժուազիայի դէմ: Այժմ մենք բացալձափ ընտրում ենք նրա համար, որպէսզի իւրաքանչիւրը իւր ընկերոջ երեսին ազնւարար ասէր. ում կողմն է մեր բարեկամների թէ թշնամիների:

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԱՂԱՔԱ- ՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Ահա թէ դարձեալ ինչը լաւ չէ, Խորհրդային հանրապետութեան մէջ, —ասում են՝ Խորհրդային իշխանութեան թշնամիները, —բոլորի համար ազատութիւն չկայ: Չկայ մամուլի, խօսքի, ժողովների և միւլթիւնների ազատութիւն»:

Երբ նրանք այդպէս ասում են, ապա երբեք չեն աւելացնում: «Չկա գործադուլների և խղճմտանքի ազատութիւն»: Իսկ չեն աւելացնում, որովհետեւ դա չի կարելի ասել: Խորհրդային հանրապետութիւնն ի մէջ գործադուլների ազատութիւն կայ: Բայց ոչ ոք գործադուլ չէ անում, որովհետեւ բոլոր բանւորները արդարացի վճար են ստանում և աշխատում են 8 ժամ: Իսկ խղճմտանքի լիակատար ազատութիւն կայ: Իւրաքանչիւրը իրաւունք ունի կրօնին հաւատալ այն պէս ինչպէս ինքն այդ կրկամենայ: Բայց պետութիւնը քահանաներին ոռճիկներ չէ տալիս: «Այլ թեյք ում ուղում էք», ասում է քահանաներին Խորհրդային իշ

անութիւնը: «Միայն չապրէք ըստ աւետարանի ինչպէս երկնային թռչուններ: Նրանք ոչ ցանում են, ոչ հնձում ու հաւաքում ամբարները:

Իսկ ինչ վերաբերում է խօսքի, մամուլի, ժողովների և միութիւնների ազատութիւններին դաժիշտ է: Դա բոլորին չի տրւում: Դա տրւում է միայն նրանց: Որոնք, խորհուրդներ են ընտրում, — բանւորներին և գիւղացիներին: Ի՞նչ կնշանակի բոլորի համար էլ ժողովների ազատութիւն, նաև բուրժուազիայի՝ ժողովրդի թշնամիների համար: Ոչ այդ ազատութիւնը մենք բուրժուազիային չենք տալ: Ձի կարելի թոյլ տալ, որ թիկունքումդ թշնամին համախմբւի երբ ճակատում կուռում ես:

Բայց դրա փոխարէն բանւորներին և գիւղացիներին խօսքի, մամուլի, ժողովների և միութիւնների ազատութիւնները տրւած է ոչ միայն խօսքով, այլ գործով: Հարցրեցէք առաջին պատահած բանւորին, գիւղացուն՝ ձենէք արդեօք տեղ, որտեղ կա քողանաք ժողովներ գումարել և խորհրդակցել ձեր գործերի մասին, ակումբ, կամ գրադարան ընթերցարան կազմակերպէք: Իւրաքանչիւրը կպատասխանի այո այժմ ունենք: Բաղաքներում ու գիւղերում հաքուսանների բոլոր լաւ տները խլած է: Նրանց մէջ հաւաքւում են պրոլետարներն ու գիւղացիները: Թաքաւորական պալատներում հաւաքւում են բանւորներն ու գիւղացիները: Իւրաքանչիւր քաղաքում ամեն մեծ տան ճակատին կը կարդաք «Ակումբ», «միութիւն», «ընթերցարան»: Խօսքի, ժողովների և միութիւնների ազատութիւնները բանւորներին և գիւղացիներին տը



ւած է ոչ թէ խօսքով այլ դործով, որովհետեւ բոլոր  
լաւ տները վերցւած են բուրժուազիայից:

Իսկ մամուլի ազատութիւնը: Մտէք առաջին պա-  
տահած խորհուրդը, կամ միութիւնը և հարցրէք ունէ՞ք  
աբղեօք տպարան, կամ թուղթ որպէսզի ժուրնալներ  
և լրագրներ տպէք: Ձեզ կալատառիւններն ճշգրտ  
բաններն ու ամբողջ թուղթը պատկանում է աշխա-  
տաւոր ժողովրդին: Մենք ամեն բան կարող ենք ար-  
դարել ամենալաւ նկատրներով: Միայն թէ թուղթը  
բաւականանար: Իսկ էժան և ձրի գրքեր քաղաքում  
անսահման քանակութեամբ կայ: Լաւագոյն հեղինակ-  
ների գրւածքները տպագրւած են և ծախւում են շատ  
էժան կամ ձրի: Իւրաքանչիւր բանւոր և գիւղացի ոչ  
միայն իւր լրագիրն ունի, այլ և կարող է կարդալ,  
եթէ կարդալ գիտէ: Իսկ առաջ մամուլի ազատութեան  
ժամանակ, ոչ միայն բուրժուազիան էր տպագրում  
այլ և կարդալ կարող է միայն բուրժուազիան:

Ահա դա է մամուլի իսկական ազատութիւնը:  
Միայն այն ժամանակ, երբ բոլոր սպարաններն ու բուդ-  
քը խլեց բուրժուազիայից, այն ժամանակ էլ սկսեց  
առխաճաւոր ժողովրդի համար մամուլի իսկական ազա-  
տութիւնը:

Իշխանութիւն, իրաւունքներ և ազատութիւն,  
Խորհրդային հանրապետութեան մէջ միայն բանւորն  
ու գիւղացին ունի: Դրա մոխարէն այդ ազատութիւն-  
ները նա ունի ոչ թէ խօսով այլ գործով: Քանի դեռ  
բանւորներն ու գիւղացիները չեն ջախջախիլ վերջ-  
նականապէս բուրժուազիայի իշխանութիւնը, չեն ամ-  
բացրել իրենց իշխանութիւնը, իրաւունքներն ու ա-  
զատութիւնները միայն նբանց կը պատկանի: Այլ, յետոք

Յո՛րք գործնականօրէն, իրօք բոյորն էլ հաւատար կը-  
նեն, երբ ոչ ոք պարտաւ չի թափառի և ուրիշի հաշ-  
ւին ապրի, այն ժամանակ բոլորն էլ իրաւունքներ և  
ազատութիւններ կունենան՝ իրօք բոյորք։ Եւ ոչ թէ  
այնպէս, ինչպէս դեմոկրատական իշխանութեան ժա-  
մանակ։ Այնտեղ—խօսքով—իշխանութիւնը և իրա-  
ւունքները բոլորինն է, իսկ գործով իրօք—միայն հա-  
քողատներինը։

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՆԵՍՏԻ ՁՕՐՔ ԵՒ ԿԱՐԾԻՐ ԲԱՆԱԿԸ

Խորհրդային իշխանութեան մէջ չկայ համաժողո-  
ւրդական պահեստի զօրք (всенародное ополчение),  
այլ կայ սեռական բանակ—կարմիր բանակ բանուոր-  
ներէից և գիւղացիներէից կազմած։ Դա կարծես թէ  
վատ է քան դեմոկրատական հանրապետութեան մէջ  
է։ Պահեստիզօրքը չէ որ էժան արժի։ Պահեստի զօրքի  
ժամանակ կարիք չկայ, որ մարդիկ իրանց որդիներ-  
րին մշտական ծառայութեան տան։ Կարծես անարդար  
է, է՛կարմիր բանակի մէջ վերցնում են միայն բան-  
ւորներին և գիւղացիներին։ Իսկ հարուստները տանը  
նստած են կուռի շին գնում։

Դա ճիշտ է, որ պահեստի զօրքը էժան արժէ։  
Միայն թէ կուռի ժամանակ, ինչպէս ուղտւո՛մ ես ան-  
սանիք, պահեստի զօրք, թէ բանակ,—ծախսը միևնոյնն  
է։ Իսկ չէ որ Խորհրդային հանրապետութիւնը ամբողջ



ժամանակ պատերազմում է բուրժուազիայի հետ՝ դուրս է գալիս, որ պահեստի զօրքը տանի էժանդարժէ:

Իսկ ինչո՞ւ է կուռում Պորկրդային իշխանութիւնը հուռւմ է որպէսզի ամեն տեղ էլ Պորկրդային կարգեր սահմանին, կուռւմ նրա համար, որպէսզի Ռուսաստանում Պորկրդային իշխանութիւնը ողջ մնայ և նրա համար, որպէսզի դրանով օգնէ աբտասահմանեան բանւորներին և գիւղացիներին: Արտասահմանումն էլ ամենուրէք սկսւում են յեղափոխութիւններ: Եւ անա, երբ այս պատերազմը բուրժուազիայի հետ ամենուրէք կվերջանայ, այն ժամանակ այլևս, բոլորովին պատերազմներ չեն լինի, և չեն լինի նրանք նրա համար, որ պատերազմներ ձեռնարկում է միշտ բուրժուազիան. չեն ունենայ հարուստները իշխանութիւն, չեն անի և պատերազմ: Նշանակում է չի լինի ոչ թէ միայն բանակ, այլ և պահեստի բանակ: Եւ անա սա ամենից էժանը կլինի ժողովրդի համար:

ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Պորկրդային իշխանութեան թշնամիները ասում են. «Այս բոլորը միայն բառեր են, թէ իբր խորհրդային հանրապետութեան մէջ աշխատաւորները ունեն ամբողջ իշխանութիւն» և բոլոր իրաւունքները, իրապէս իշխանութիւնը և իրաւունքները վերապահւած են միայն

մի կուսակցութեան — մեծամասնականների կուսակցութեան. Մեծամասնականները դուրս քշեցին խորհուրդներին, մինչև անգամ նրանց, որնոր նոյնպէս պաշտպանում են սոցիալիզմը: Դուրս քշեցին սոցիալ-դեմոկրատ մենչեիկներին, դուրս քշեցին սոցիալիստ-յեզափոխականներին (էս-էրներին) նախ աջերին, ապա՝ ձախերին. Մենչեիկներին և էս-էրներին չեն թոյլ տալիս պատգամաւորներ ընտրելու խորհուրդների մէջ, չեն թոյլ տալիս, հաւաքել, լրագրներ տպել: Եւ դուրս է դալիս, որ խորհուրդային հանրապետութեան մէջ իշխանութիւնը և իրաւունքները բոլոր բանւորներին և գիւղացիներին չի տւած, այլ միայն բուլշեիկներին»:

Ճիշտ է այն, որ 1918 թւի ամառը մենչեիկներին և էս-էրներին դուրս քշեցին խորհուրդներից նրա համար, որ նրանք ասում էին. «Հարկաւոր է տապալել խորհրդային իշխանութիւնը», և նրա դէմ կազմակերպում էին ապստամբութիւններ:

Բայց այդպէս էլ հարկաւոր էր անել: Խորհրդային իշխանութեան միշտ պաշտպան է կանգնել Ռուսաստանի աշխատաւոր ժողովրդի մեծագոյն մասը: Հէնց իրենք մենչեիկները ասում են, որ իրենց յետեւից գնում է բանւորութեան ամենափոքրագոյն մասը: Խորհուրդների բոլոր համագումարներում մենչեիկները և էս-էրների յետեւից կանգնած է եղել պատգամաւորների փոքրագոյն մասը: Եւ միթէ կարելի է թոյլ տալ, որ պէսզի մի փոքրիկ խմբակ, մի բուռն մարդիկ, քար գցեն բանւոր ժողովրդի ոտքերի տակ, երբ նա կեանքի ու մահու կռիւ է մղում տէրերի հետ:

Վերջնենք մի օրինակ. ասենք, բանւորները իրենց տէրերի դէմ գործադուլ յայտարարեցին, կամ



ասենք, դիւղացիները չեն ցանկանում աշխատել կաշ-  
ւածատիրոջ մօտ, որը նրանց ճնշում է: Իսկ այդ ժա-  
մանակ մի որեւէ դաւաճան, թուլամորթ, գնում է գոր-  
ծարանատիրոջ մօտ և սկսում է աշխատել, քանզում  
գործադուլը, իջեցնում է աշխատավարձը: Ի՞նչ են անում  
քանւորները և գիւղացիները իրենց այդպիսի ընկեր-  
ւերի հետ: Մեծում են անխնայ, երբեմն մինչև անգամ  
սպանում են: Եթէ աշխատաւոր ժողովրդի մեծամաս-  
նութիւնը կռւում է տիրոջ հետ, փոքրամասնութիւնը  
չի կարող խանգարել, նա պէտք է դնա մեծամասնու-  
թեան յետևից:

Իսկ եթէ քանւորները ու գիւղացիները ոչ թէ  
հասարակ գործադուլ ալեցին, այլ մինչև մահ պատե-  
րազմ սկսեցին բուրժուազիայի հետ: Կարելի է ար-  
դեօք այստեղ թոյլատրել, որպէսզի իրենց իսկ ընկեր-  
ւերը նրանց թիկունքում ապստամբութիւններ կող-  
մակերպէին:

Այդպիսի «ընկերների» հետ լիստակցութիւնը  
կարճ է լինում: Դրանք ոչ թէ ընկերներ են, այլ դա-  
ւաճաններ: Ի հարկէ նրանց հարկաւոր է գուրա քշել  
Խորհուրդներից, հարկաւոր է զրկել բոլոր իրաւունքնե-  
րից թէ լրագրներ ապելուց թէ ժողովներ կազմակեր-  
պելուց:

Նշանակում է կարելի է և հարկաւոր է գուրա  
քշել Խորհրդներից մենշևիկներին, աջ և ձախ էսէրնե-  
րին:

Եւ գրանից Խորհրդային իշխանութիւնը չի դա-  
դարիլ լինել քանւորների և գիւղացիների իշխանու-  
թիւն: Խորհրդներում մնացին միայն մեծամասնակա-  
ները, որովհետև նրանք միայն մինչև վերջ հաւատա-

րիմ էին աշխատաւոր ժողովրդին և նրա իշխանութեանը,— Խորհուրդների իշխանութեանը: Եւ մէկ էլ նրա համար, որ աշխատաւոր ժողովուրդը այդ ժամանակ միայն մեծամասնականների ետեից էր գնում: Երբ ձախ էս-էրները պաշտպանում էին Խորհրդային իշխանութիւնը, այն ժամանակ նրանք էլ էին նստում մեծամասնականների հետ ժողովրդական կոմիսարներին խորհրդում և բոլշեւիկների հետ միասին կառավարում պետութիւնը:

Մենշևիկները հիմայ գղջացին իրենց շատ մեղքերը: Նրանք յայտարարեցին, որ չեն ցանկանում տապալել Խորհրդային իշխանութիւնը: Եւ ամիջապէս Խորհուրդների կենտրոնական Գործադիր կոմիտէն վերադարձրեց նրանց բոլոր իրաւունքները: Նրանց բոլորին նորից թողին մտնել Խորհուրդները: Եւ այդ էս էրները ևս ակնեցին պաշտպանել Խորհրդային իշխանութիւնը: Այդպիսի էս-էրներին ևս վերադարձւած են նրանց բոլոր իրաւունքները:

Մեծամասնականները ամենեւին էլ չեն ցանկանում իրենց ձեռքում միայն պահել ամբողջ իշխանութիւնը, բոլոր իրաւունքները: Նրանք բոլորովին էլ չեն ցանկանում ոչնչացնել բոլոր միւս կիսաբուրժուական կուսակցութիւնները, որոնք մի աչքով նայում են տէրերի վրայ, իսկ միւսով՝ բանւորների և զիւղացիների: Մեծամասնականները անխնայ խփում են միայն բուրժուազիային, միայն, հարուստներին, որովհետեւ այդ է ցանկանում ամբողջ բանւոր ժողովուրդը:

Իսկ մենշևիկների և էսէրների դէմ նրանք կռւում են միայն այն ժամանակ, երբ մենշևիկները է էսէրները տիրոջ իշխանութեան համար բանւոր




ներին և գիւղացիներին հակառակ են գնում:

Եւ այդ տատճառով խորհրդային իշխանութիւնը ամբողջ բանւոր ժողովրդի իշխանութիւն է: Ոչ մի ճմարիտ խօսք չկայ նրանում, ինչ որ ասուծ են նրա թշնամիները: Միայն խորհրդային իշխանութիւնը տալիս է բանւորներին և գիւղացիներին վերջնական յապթութիւն: Երբ ամեն տեղ կը յաղթի խորհրդային իշխանութիւնը այն ժամանակ ամբողջ աշխարհում բանւորները և գիւղացիները ազատ շունչ կը քաշեն: Այն ժամանակ ամեն տեղ խողաղութիւն ազատութիւն և հանգիստ աշխատանքային կեանք կլինի:

Արդարացի է, որ Կարմիր Բանակում ընդունում են միայն բանւորներին և գիւղացիներին: Բայց ում դէմ է կռուում Կարմիր բանակը: Բուրժուազիայի դէմ: Ել կարելի է աւելի իր թշնամիներին վերցնել իբրեւանակի մէջ և տալ նրանց զէնք: Այսպէս անել, կըստացւի ոչ թէ միայն անարդարացի, այլ և անմիտ:

Բայց Խորհրդային իշխանութիւնը և բուրժուազիային հանգիստ չի թողնում: Նա նրան վերցնում է ծառայութեան, բայց միայն ոչ բանակում, այլ թիկունքային շարքերում—խրամատային աշխատանքների, տնտեսական աշխատանքները—ճաշ եփել, կոշիկ մաքրել: Առաջներում այս բոլորը կատարում էին բանւորները և գիւղացիները, այժմ թող դրան սովորեն հարուստները և տնօրէնները:



ՀՀ Ազգային գրադարան



NL0835958



U 351

U 92

367